

Առաջարկ

Տարեց տարի աճում է գրոսաշրջիկների թիվը Երևանում: Շատերը բարձրանում են կասկադի վերևի հարթակը քաղաքի համայնապատկերը դիտելու նպատակով:

Մակայն մոտենալով կասկադի ներքևի հարթակին շատ անդուր և փնթի տեսարան է բացվում: Կասկադի աստիճանների ձախ կողմից հողի տակից բետոնե սյուներ են դուրս գալիս, աջ կողմից էլ վերևից ներքև մեծ ժանգոտած խողովակ է անցնում:

Այժմ կասկադն այսպիսի տեսք ունի (նկար 1):



Նկար 1

Առաջարկում են կարգի բերել կասկադի հարակից տարածքը և ծառատունկ կազմակերպել կասկադի աջ և ձախ կողմերից:

Լուծում

Ծառատունկն արաջարկում են կազմակերպել 3 շարքով. 2 շարք տույաներ և 1 շարք եղևնիներ:

Ծառատունկի իրականացումը կարող է գեխեցկացնել կասկադի համալիրը, մասամբ վերականգնել նախկինում կանաչապատված տարածքը և որոշ չափով ծածկել հարակից

շենքերի անհաջող ճարտարապետական լուծումներ: Այս ծրագրի իրականացումը կարելի է սրսել արդեն այս աշնանը:

Ծրագիրն իրականացնելուց հետո, կասկաղն այսպիսի տեսք է ունենալու (նկար 2):



Նկար 2

Հետզրույթուն

Նախկինում կասկաղի տարածքը այսպիսի տեսք է ունեցել:

